**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**

**2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» N ՄՇԴ-167-2025 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «21» «08» 2025 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Համլիկ Հակոբյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնին աջակցման հիմնադրամը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ռաֆայել Ասատրյանի, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնին աջակցման հիմնադրամի միջև 2025 թվականի ապրիլի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N ՄՇԴ-167-2025 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 2.4.8-րդ, 9.3-րդ կետերը և հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչության 2025 թվականի օգոստոսի 14-ի Ն/13/20405-2025 զեկուցագիրը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին լուծել 2025 թվականի ապրիլի 3-ի «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» ՄՇԴ-167-2025 պայմանագիրը:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

2.1. Կողմերը պայմանագիրը համարում են լուծված:

2.2 Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո կազմակերպությունը պարտավորվում է 10-օրյա ժամկետում պայմանագրով հատկացված գումարը վերադարձնել 900011032878 հաշվեհամարին և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով՝ 900005028106 հաշվեհամարին:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի միջև կնքման պահից:

3.2. Սույն համաձայնագիրը բաղկացած է 1 թերթից, կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

## 4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011032878,
հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝

________ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝**

Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնին աջակցման հիմնադրամ
Ք. Գյումրի, Սայաթ Նովա 4
Հ/Հ 157 002 428 991 280
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ»
Գյումրու մ/ճ
Հեռ. 060 38 10 12, 060 38 10 14
ՀՎՀՀ 05545115

տնօրեն ________ Ռ. Ասատրյան
(ստորագրություն)
Կ. Տ.